նէս եպիսկոպոսի մասին են խօսում, իբրև «զցրուեալ վիճակս (Ամարասի)» հաստատողի և եկեղեցու շէնքը վերջացնողի։ Երկու եպիսկոպոսների տարագրութիւնը, ապա վերադարձը կապ ունէր Թաթարների արշաւանքի հետ, երբ «ազգն Նետողաց զբաղում գաւառս աւերեաց եւ մնաց այլասեռից աթոռ եւ վիճակ սրբոյն Գրիգորիսի»(*)։

Կախաբերի որդի Բուրդը 1244 թուին Ս. Լուսաւորչի դրանը կրօնաւոր է դառնում Յովհաննէս կոչուելով և Սուրբ Յովհաննիսի մասունքի համար պահարան շինում. նորա արձանագրութիւնը գտնւում է ժամատան դրան ճակատին, կամարից և վերոյիշեալ եպիսկոպոսների արձանագրութիւնից բարձր (Յաւել. Ա. 54, պատկ. 129)։

Թաթարական արշաւանքի ժամանակ այս չէն եւ Գանձասարի վանքի, միւսը նորա ժամատան։ Այդ երկու ամուսինները 1248 թուին, վանքի առաջնորդ Մխիթարի օրով, ուխտ են գալիս և «բազում գանձիւք վերստին» նորոգում են «մեծ և հռչակաւոր» վանքը և իւրաքանչիւր տարի քառասուն դուկատ նուէր նշանակում «ի համաւրէն վաճառէն»(*). Վարդապետները Մխիթարի և միւս միաբանների հետ սահմանում են բոլոր եկեղեցիներում երկու օր պատարագ, աւագ զատկին Հասան–Ջալալին «և :գ: չաբաթն աւրն» Մամքանին։

*Հաւանօրէն Մխիթարը կենդանի էր, երբ 1252 թուին կանգնում են Վեցիկի խաչարձանի (*պատկ. *130)(**) մօտ մի ուրիշ խաչքար այսպիսի արձանագրութեամբ. Թվ. ՉԱ: Բս. | ԱԾ ողորմեա | Յազազարա ի | զալըստեան քում» (*պատկ. *131)։*

Պատկեր 129.

փառաւոր վանքը, որ այնքան խնամքի և ուշադրութեան էր արժանացած Վասակ Խաղբակեանի և Գրիգոր վարդապետ Մոնոնիկի կողմից, աւերման է ենթարկւում. մեր միակ աղբիւրն այդ մասին Խաչենի Խոյախան բերդի մեծ իշխան՝ Վաղթանկի որդի Հասան–Ջալալի և նորա կնոջ՝ Բաղաց թագաւորի դուստր Մամքանի արձանագրութիւնն է, ժամատան երդիկի պատուանդան կազմող գարնէզի վերայ (Յաւել. Ա. 55), երկուսն էլ յայտնի իրենց շինարարութեամբ, մէկը

Մխիթարի յաջորդն էր որպէս առաջնորդ Թադէոս վարդապետ, որի անունը յիշուած է ՉԺԱ (= 1262)

(*) *Շահխաթունեան Բ. 366։ Բարխ. Արցախ, 81-82։ Կոստ. Վիմ. Տարեգիր, 84, 90։*

(*) *«Վաճառք» անունով տեղի աւերակները գտնւում են Հասան-Ջալալի իշխանութեան մէջ, ոչ հեռու Խոյախան բերդից՝ Գանձասար և Առաջաձոր գիւղերի մէջ։ Այս վայրը, հաւանօրէն, իշխանութեան վաճառականական կեդրոնն էր, տօնավաճառը, որի եկամուտից իշխանական զոյգը տարեկան քառասուն դուկատ նպաստ է նշանակում այս վանքին։ Հասան Ջալալի մասին Գանձ. 249, 254, 269, 298, 345-6, 373-375։ Նաև Նախընթաց ծանօթութիւնը Վաղթանկների մասին։*

(**) *Տես և Խաղբակեանք Ա. պատկ. 24, որ աղօտ լինելու պատճառով այստեղ երկրորդում ենք։*